ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

17 հուլիսի, 2019թ.

Ք.Երևան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 24-ի «Հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդ ստեղծելու, խորհրդի կազմը և գործունեության կարգը, խորհրդի կազմում ներգրավվող հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի ապրիլի 18-ի N 300-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 808-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ ՀՀ արդադարադատության նախարարի՝ 2019 թվականի հունիսի 26-ի թիվ 236-Ա հրամանով ստեղծված Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման գործընթացի իրականացման նպատակով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) միաձայն

ՈՐՈՇԵՑ՝

1. «Մեհրաբյան գիտա-ուսումնական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված հայտին ընթացք չտալ՝ հաշվի առնելով հայտ ներկայացրած հասարակական կազմակերպության կողմից սահմանված ժամկետում

թերությունները չշտկելը և, ըստ այդմ, Որոշման հավելված 2-ի 7-րդ կետով սահմանված պահանջներին չհամապատասխանելը:

2. Հաստատել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն», «Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Հետաքննող լրագրողներ», «Հայկական հոգեբուժական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունների և «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը Որոշման հավելված 2-ի 7-րդ կետով սահմանված պահանջներին:

3. Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավման նպատակով անցկացված մրցույթի արդյունքները տրամադրել ՀՀ արդարադատության նախարարին՝ ՀՀ վարչապետին ներկայացնելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝ ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՅԱՆ

Հանձնաժողովի անդամներ՝ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ